# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 օգոստոսի 2022 թվականի թիվ 291-Ա

## «ԱՐԱՔՍ ԹՌՉՆԱՖԱԲՐԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի օգոստոսի 2-ի նիստում, քննարկելով «Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

***<u>1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.</u>***

Հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 7-ին ««Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 213-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 213-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-01028/22 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**)։

Ընկերությունը թիվ 213-Ա որոշումը ստացել է 2022 թվականի հունիսի 24-ին և 2022 թվականի հուլիսի 8-ին Հանձնաժողով է ներկայացրել միջնորդություն (այսուհետ նաև՝ **Միջնորդություն**)՝ արագացված վարույթ կիրառելու վերաբերյալ։

Հանձնաժողովը 2022 թվականի հուլիսի 15-ին «Թիվ ՀԳ-01028/22 վարույթով պատասխանող ««Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված միջնորդությունը բավարարելու և արագացված վարույթ կիրառելու մասին» թիվ 258-Ա (այսուհետ նաև՝ **թիվ 258-Ա որոշում**) որոշմամբ կիրառվել է արագացված վարույթ։

***<u>2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.</u>***

Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մայիսի 30-ի «Դիտանցումներ իրականացնելու մասին» թիվ 92-Ա, թիվ 93-Ա և թիվ 94-Ա հրամանների հիման վրա իրականացվել է դիտանցումներ։

Դիտանցումների արդյունքում արձանագրվել է, որ Ընկերության կողմից արտադրվել և իրացվել են «eoos» մակնշմամբ 10 հատանոց տուփով հավկիթներ, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը, «eoos» մակնշմամբ 6 հատանոց տուփով հավկիթներ, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը, «eoos» մակնշմամբ 15 հատանոց տուփով հավկիթներ, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը, «eoos» մակնշմամբ «թարմ հավ ափսեով», «eoos» մակնշմամբ «հավի ֆիլե», «eoos» մակնշմամբ «հավի դոշ», «eoos» մակնշմամբ «հավի թև» և «eoos» մակնշմամբ «հավի բուդ» (այսուհետ նաև՝ **Ապրանքներ**):

Վարույթը հարուցվել է Ընկերության կողմից արտադրված «eoos» մակնշմամբ Ապրանքների և հավի ձվի կճեպի վրա «ԷԿՈս» բառի մակնշմամբ հավկիթների իրացման միջոցով հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

***3. Ընկերության դիրքորոշումը.***

Ընկերությունը 2022 թվականի հունիսի 8-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ սույն գրությունը ներկայացնելու օրվա դրությամբ «eoos» գրառումը պարունակող պիտակով արտադրանք Ընկերությունը չի կազմակերպում, իր բոլոր արտադրանքների վրա «eoos» գրառումը բացակայում է, իսկ նախքան Հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 12-ի ««Արաքս Թռչնաֆաբրիկա» փա բաժնետիրական ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 217-Ա որոշման (այսուհետ նաև՝ **թիվ 217-Ա որոշում**) ուժի մեջ մտնելն արտադրված համապատասխան պիտակավորմամբ արտադրանքը հանվել է իրացումից:

Ընկերությունն անմիջապես հաշվի է առել Հանձնաժողովի դիրքորոշումը և իրեն Հանձնաժողովի կողմից ներկայացված մրցակցությունը սահմանափակող պայմաններն ու գործունեությանը ներկայացվող փոփոխված պահանջները և սահմանված ու ողջամիտ հնարավոր ժամկետներում վերացրել է Հանձնաժողովի վարչական ակտով հաստատված իրավախախտումը, սակայն կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի փոփոխությամբ պայմանավորված՝ եռօրյա ժամկետում գրությամբ չի տեղեկացրել այդ մասին Հանձնաժողովին:

Ընկերությունը խնդրել է Հանձնաժողովին հատուկ ուշադրություն դարձնել, որ Ընկերության բոլոր արտադրատեսակներն ունեն բարձր որակ, ներառյալ՝ փաստացի և իրենց տեսակով էկոլոգիապես մաքուր և բնությունից կենսաբանորեն ակտիվ օրգանական արտադրանք են հանդիսանում, լվացված, ախտահանված և անվնաս են, պարունակում են մեծ թվով վիտամիններ և օգտակար են, այդ թվում՝ առողջ ապրելակերպի և սննդակարգի համար, և դա ապահովելը ոչ թե ձևական կամ սերտիֆիկատի, այլ արտադրողի գործարար համբավի, սպառողների մասին հոգատարության և աշխատանքի ճիշտ կազմակերպման նպատակով ու արդյունքում է: Ընդ որում, հանրահայտ փաստ է, որ ձուն էկոլոգիական պրոդուկտ է առհասարակ, ուստի հանրահայտ փաստերի ապացուցման կարիք որևէ տնտեսվարող սուբյեկտի համար չի առաջանում, դա Վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի պահանջ է, ընդ որում, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիզների դեպքում, իրավաբանական անձանց համար բարենպաստ նորմատիվ իրավական ակտի նորմը կիրառելը (եթե այդ նորմի կիրառմամբ չեն շոշափվում

այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը) պարտադիր է: Օրինակ, Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի՝ 2017 թվականի խմբագրությամբ կճեպով սննդի ձվերի չափորոշչի համաձայն՝ գոյություն ունեն ոչ թե պարզապես սերտիֆիկացված ու չսերտիֆիկացված, այլ սննդի համար նախատեսված (պիտանի) և արտադրական ձվեր, որտեղ առաջինները սննդի համար անվնաս, առողջության համար անվնաս և հետևապես՝ էկոլոգիապես մաքուր, թարմ կամ շատ թարմ և այլ չափանիշներին համապատասխանող սննդի համար պիտանի ձվերն են:

Սակայն Ընկերությունը նշել է, որ որևէ նպատակ չի ունեցել վերջինիս կողմից կոնկրետ տեսակի արտադրանքը էկոպրոդուկտ դիրքավորելու համար, ընդ որում, հակառակ դեպքում մյուս պրոդուկտները էկոլոգիապես մաքուր, անվնաս չէին լինի, իսկ ֆաբրիկան իր արտադրական պրոցեսները կազմակերպում է միանման՝ անվտանգության և առողջության պահպանման բոլոր չափանիշներին համապատասխան, ՀՀ գործող օրենսդրության բոլոր պահանջների հաշվառմամբ:

Միաժամանակ Ընկերությունը նշել է, որ որևէ առանձին ապրանքատեսակ, արտադրանք չի դիրքավորել որպես սերտիֆիկացված կամ չսերտիֆիկացված էկոպրոդուկտ, սակայն փաստացի ապահովել է ոչ միայն էկոլոգիապես մաքուր, այլև կենսաբանորեն օգտակար, առանց հավելումների, մաքուր, անվնաս, օգտակար արտադրանքի առկայությունը, որպիսի հանգամանքի մասին Ընկերությունը գերազանցապես չի նշում արտադրանքի մասին տեղեկատվությունում:

Արտադրանքն արտադրվում է ոչ միայն ներպետական, այլև մի շարք միջազգային համապատասխան տեխնիկական կանոնակարգերի և նորմատիվ այլ փաստաթղթերի պահանջներին համապատասխան, այդ թվում, օրինակ՝ սննդի անվտանգության կառավարման համակարգին ներկայացվող պահանջների համապատասխանության՝ ISO 22000:2018 ստանդարտին:

Սննդամթերքին, գյուղմթերքին ներկայացվող բոլոր տեխնիկական և արտադրական, նորմատիվ և այլ պահանջները, ներառյալ՝ էկոլոգիական մաքրության և առողջության համար անվնաս լինելու մասով, (շատ) թարմ լինելու մասով, յուրաքանչյուր գործարարի պարտականությունն է՝ օրենքի պահանջները հաշվի առնելու և պահպանելու առումով, ինչը դեռևս չի նշանակում, որ արտադրանքը շուկայում դիրքավորվում է որպես էկոպրոդուկտ, քանի որ իրականում կարող է և պետք է իր որակական հատկանիշներով ունենա նաև ավելի բարձր որակ, քան պարզապես էկոպրոդուկտը: Օրինակ, Ընկերությունն ունի ապրանքատեսականու մեջ նույնանման, սակայն ավելի բարձր դասի ապրանքներ, որոնք վաճառվում են ավելի բարձր արժեքով, մինչդեռ համապատասխան արտադրանքը որպես էկոլոգիապես մաքուր գյուղմթերք դիրքավորելու դեպքում այն կվաճառվեր անհամեմատ բարձր արժեքով, սակայն դրա փաստացի գինը ցույց է տալիս մեր նման մտադրության բացակայությունը: Այսինքն, իրականում, անկախ պիտակավորումից և դրա փոփոխությունից, Ընկերության տվյալ տեսակի ապրանքների արտադրական ցիկլերի առումով որևէ փոփոխություն չի կատարվել, որակը մնացել է անփոփոխ բարձր, ուստի վերագրվող արարքի փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի և սպառողների շահերի վրա իրականում բացակայում է:

Ընկերությունն ի նկատի ունենալով, որ Հանձնաժողովը հաշվի է առնում հանգամանքներ, որոնց անհրաժեշտ է անդրադառնալ՝ Վարույթով լիարժեք, բազմակողմանի և ամբողջական եզրահանգում ձևավորելու նպատակով, խնդրո առարկա հարցը և Վարույթը քննարկելիս Ընկերությունը խնդրել է Հանձնաժողովին կիրառել և առաջնորդվել բարեխղճության, ազնվության, արդարության, ճշմարտության,

անաչառության, արդարության, օրինականության, ձևական պահանջները չարաշահելու արգելքի, վարչարարության համաչափության, հավաստիության կանխավարկածի, առավելագույնի, իրավաչափության, հումանիզմի, արարքի կատարման համար ըստ մեղքի պատասխանատվության, համաչափության օրենսդրության և իրավունքի սկզբունքներով:

Բացի այդ, Ընկերությունը հայտնել է, որ «eoos» բառը պարունակող պիտակների մասին Հանձնաժողովի դիրքորոշմանը տեղեկանալու պահից անմիջապես և անհապաղ միջոցներ է ձեռնարկել՝ բացառելու համար այդօրինակ պիտակների գործածությունը, ընդ որում՝ ֆաբրիկայի պատվերով իտալական արտադրության և սննդի համար անվտանգ ու տպագրված մասեր պարունակող տոպրակների, պիտակավորման բարձրորակ նյութերի, փաթեթավորման այլ՝ սննդի որակյալ պահպանության համար նախատեսված միջոցների ձեռքբերումն իրականացվել է աննախադեպ սեղմ ժամկետներում, սակայն այդ ընթացքում արտադրությունը կանգնեցվել չէր կարող և պետք է ապահովվեր գործունեությունը՝ նախքան նոր՝ փոխարինող փաթեթավորման նյութեր ունենալը, գործընկերների հետ արտադրական փոփոխությունները համաձայնեցնելն ու կազմակերպելը: Արդյունքում Ընկերությունը պարզել է, որ արտադրական գործունեության նման փոփոխությունը ոչ միայն չնախատեսված արժեքային ծախսեր և ժամանակային կորուստ է հանդիսացել Ընկերության համար, այլև ազդել է արտադրական և փաթեթավորման ցիկլերի վրա, արդյունքում իրացման է ներկայացվել անհամարժեք ծավալի արտադրանք, ինչի արդյունքում կազմակերպությունը ունի կորուստներ, այդ թվում՝ իրական վնաս և բացթողնված օգուտ: Փաստացի կազմակերպության բացասական ֆինանսական հետևանքները էապես գերազանցում են տուգանքի առավելագույն չափը, որը կարող էր կազմակերպության նկատմամբ կիրառվել խախտումը վերացված չլինելու պարագայում: Ընդ որում, Ընկերությունը որևէ շարժառիթ կամ մտադրություն չի ունեցել շարունակելու նույն պիատակի կիրառությունը, քանի որ դա անմտություն է վարչական ակտը չբողոքարկելու պայմաններում, և ողջամտորեն պարզ է, որ մի կողմից Հանձնաժողովի պահանջներին համապատասխանեցումը որոշակի ժամանակ է պահանջում, որի ընթացքում էլ ապահովել է սահմանված պահանջների պահպանումը, մյուս կողմից ակներև է, որխախտումը չվերացնելու դեպքում պետական մարմնի կողմից կկիրառվեին իրավական բացասական հետևանքներ, հետևապես՝ տնտեսավարող սուբյեկտը չէր կարող և չի կարող թույլ տալ իր գործարար համբավը, երկար տարիներ արդյունավետ գործարար գործունեության արդյունքները և ձեռբերումները, հեղինակությունը, սպառողների մոտ վայելող վստահությունը, բիզնեսի զարգացումը, ներդրումային նախագծերի նախաձեռնումն ու իրականացումը վտանգող կամ դրանց լրացուցիչ առիթների և խոչընդոտների արհեստական առաջացումը, արարքի կատարման մեջ դիտավորություն և նման արարք կատարելու մտադրություն չի ունեցել, ուստի սահմանված ժամկետում և հնարավորության սահմաններում սեղմագույն ժամկետում վերացրել է Հանձնաժողովի կողմից փաստվող խախտման հետևանքները, սակայն Ընկերությունը պատասխանատու չէ առանձին գործընթացների բնական ընթացքի համար անհրաժեշտ տևողության, կոնտրագենտների կողմից մատակարարման, մաքսային ձևակերպումների, տրանսպորտային փոխադրման, արտադրական պրոցեսում դրանք ինտեգրելու, արտադրական պրոցեսի համար ողջամտորեն անհրաժեշտ ժամանակի համար, քանի որ դրանք պահանջում են իրենից անկախ հանգամանքներով, մինչդեռ Հանձնաժողովի

դիրքորոշումը կանխատեսել հնարավոր չէր և չէր լինի, քանի որ դա կհամարվեր անհարկի միջամտությունվարչական մարմնի գործունեությանը. հետևապես, ըստ էության, տնտեսավարող սուբյեկտի համար Հանձնաժողովի որոշումը հանդիսացել է անհաղթահարելի հանգամանք, որպիսի պարագայում վարչական ակտով սահմանված պարտավորության՝ սահմանված ժամկետում կատարելն անհնարին էր, սակայն Ընկերությունը փաստացի համաձայնել է պահպանել Հանձնաժողովի պայմանների կատարումն ու ապահովել է դրանց ժամանակին ու պատշաճ կատարումը:

Ընկերությունը խնդրել է Հանձնաժողովին հաշվի առնել նաև, որ տուգանքի հնարավոր ազդեցությունը Ընկերության վրա կլինի անդառնալի, ինչպես անդառնալի կլիներ նաև արտադրական պրոցեսի կանգնեցումը՝ հետևյալ պատճառաբանությամբ. Ընկերությունը ունի երկար տարիների դրական և կայուն վարկային պատմություն և տուգանքի վճարումը մի արարքի համար, որի կատարման դիտավորություն չի ունեցել, կհանգեցնի վարկային մարումների կետանցման, ինչը կապակայունացնի Ընկերության ներկայիս և ապագա վարկային կշիռը: Ընդ որում, վարկային միջոցները ձեռք են բերվել ապրանքատեսականու բարձր որակ, այդ թվում՝ փաստացի էկոլոգիապես մաքուր, առանց հավելումների, հստակ վերահսկվող արտադրական պրոցեսով անհրաժեշտ և բավարար պայմաններ ապահովող արտադրատեսակներ ապահովելու համար, ինչն առանց կողմնակի ֆինանսական աջակցության նման սուղ տնտեսական պայմաններում շատ դժվար և անգամ անհնարինկլիներ ապահովել:

Տուգանքի կիրառմամբ այդ միջոցները կուղվեն ոչ թե արտադրանքի որակի մեջ ներդրում կատարելուն, և դրան ուղղված ֆինանսական միջոցների մասով վարկային պարտավորությունների սպասարկմանը, աշխատավարձերի վճարմանը, այլ ինքնանպատակ հանդիսացող տուգանքի վճարմանը, թեև իրականում խախտումը վերացված լինելու պահի դրությամբպատասխանատվության միջոցի կրառումն իրավաչափության տեսանկյունից ներպետական և միջազգային ատյաններում հարցեր է առաջացնում, որոնց պատասխանը տրվում է ի օգուտ խախտումը վերացված տնտեսավարող սուբյեկտի:

Ընկերությունը խնդրել է Հանձնաժողովին հատուկ ուշադրություն դարձնել այն մասին, որ Ընկերության գործունեությունը ռիսկային է ձվարտադրությունը, ճտահանությունը, հավերի աճեցումը խիստ և սեղմ ժամկետներում են կազմակերպում, դրանից շուտ կամ ուշ պրոցեսները տեղի ունենալ չեն կարող, որպիսի պարագայում արտադրության կանգնեցումը վերարտադրությունն ի չիք դարձնող բավարար պայման կլիներ, որպիսի պարագայում Ընկերության գործունեությունը կվտանգվեր առհասարակ, ուստի առաջնորդվելով վնասի նվազեցման և բարեխղճության սկզբունքներով՝ տնտեսվարող սուբյեկտը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ և բավարար միջոցները՝ սեղմագույն հնարավոր ժամկետներում:

Ընկերությունը նշել է, որ անհրաժեշտ է հիմք ընդունել այն հանգամանքը, որ տուգանքի կիրառումն անհամաչափ է կատարված իրավախախտման համեմատ, քանի որ իրականում խոսքը խախտման հետևանքների վերացման ժամկետի՝ վարչական ակտում նշված ժամկետից ավել տևողություն ունենալու մասին է՝ սույն դիրքորոշման մեջ շարադրված պայմաններում և փաստերի առկայությամբ, իսկ տնտեսավարող սուբյեկտին տուգանք տեսակի պատասխանատվության միջոցի ենթարկելու համար անհրաժեշտ և

բավարար բոլոր պայմանները բացակայում են, այդ թվում՝ բացակայում է տնտեսավարող սուբյեկտի դիտավորությունը, հակառակը՝ տնտեսավարող սուբյեկտը համաձայնել է Հանձնաժողովի որոշման հետ և վճարել սահմանվածտուգանքը, անմիջապես ծախսեր է կատարել՝ Հանձնաժողովի սահմանված նոր պահանջներին համապատասխանեցնելու նպատակով, միաժամանակ՝ որոշումը չի բողոքարկվել դատական կարգով, ընդ որում՝ արարքի հետևանքների ամբողջ ծավալով վերացվել են հնարավոր սեղմ ժամկետներում:

Ընկերությունը հայտնել է նաև, որ անհրաժեշտության դեպքում պատրաստ է ներկայացնել Հանձնաժողովի պահանջով Վարույթով քննարկման համար անհրաժեշտ ցանկացած փաստաթուղթ, այդ թվում՝ խախտման վերացման ներքին՝ գաղտնի փաստաթղթերը՝ արձանագրությունները, բանկային գաղտնիք կազմող վարկային պայմանագրերը և այլն:

Ավելին, Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 395-Ն որոշմամբ սահմանված պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանության (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**) 9-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը կարող է տալ նախազգուշացում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքերում.

1) պատասխանողն ընդունել է իրեն վերագրվող իրավախախտման փաստը, դադարեցրել է իրավախախտումը և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ իրավախախտման հետևանքները վերացնելու նպատակով.

2) տուգանքի կիրառումն անհամաչափ է կատարված իրավախախտման համեմատ:

Վերոնշյալով պայմանավորված՝ Ընկերությունը խնդրել է Հանձնաժողովին ընդունված և վերացված իրավախախտման համար որպես պատասխանատվության միջոց կիրառել նախազգուշացում, քանի որ իրականում նույն իրավախախտում տեղի չի ունեցել, այլ խոսքն այն (ներառյալ՝ հետևանքները) վերացնելու ու վերացման համար սահմանված ժամկետների մասին է, որոնք սույն դիրքորոշումը ներկայացնելու պահի դրությամբ ևս լիովին պահպանված է, արարքի հետևանքներն ամբողջությամբ վերացված են, սակայն եթե Հանձնաժողովն ենթադրաբար հանգի եզրահանգման՝ առ այն, որ այդուհանդերձ տնտեսավրող սուբյեկտն իրավախախտում է կատարել, ապա Ընկերությունը խնդրել է կիրառել նախազգուշացում տեսակի պատասխանատվության միջոցը՝ հաշվի առնելով վերոշարադրյալը և ղեկավարվելով վերը նշված սկզբունքներով:

***4. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.***

1. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մայիսի 30-ի «Դիտանցում իրականացնելու մասին» թիվ 92-Ա հրամանի հիման վրա 2022 թվականի մայիսի 31-ին «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «Երևան Սիթի» սուպերմարկետում՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 10 հասցեում, իրականացվել է դիտանցում, որի արդյունքում կազմվել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 92 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 92 արձանագրություն**):

Թիվ 92 արձանագրության համաձայն՝ «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «Երևան Սիթի» սուպերմարկետում

(հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 10) վաճառվում են Ընկերության կողմից արտադրված 10 հատանոց տուփով հավկիթներ, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը (համաձայն մակնշման՝ դրանք արտադրված են 2022 թվականի մայիսի 25-ին), «eoos» մակնշմամբ 6 հատանոց տուփով հավկիթներ, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը (համաձայն մակնշման՝ դրանք արտադրված են 2022 թվականի մայիսի 18-ին), «eoos» մակնշմամբ 15 հատանոց տուփով հավկիթներ, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը (համաձայն մակնշման՝ դրանք արտադրված են 2022 թվականի մայիսի 11-ին), «eoos» մակնշմամբ «թարմ հավ ափսեով», «eoos» մակնշմամբ «հավի ֆիլե» (համաձայն մակնշման՝ դրանք արտադրված են 2022 թվականի մայիսի 31-ին), «eoos» մակնշմամբ «հավի դոշ» (համաձայն մակնշման՝ դրանք արտադրված են 2022 թվականի մայիսի 30-ին), «eoos» մակնշմամբ «հավի թև» (համաձայն մակնշման՝ դրանք արտադրված են 2022 թվականի մայիսի 30-ին) և «eoos» մակնշմամբ «հավի բուդ» (համաձայն մակնշման՝ դրանք արտադրված են 2022 թվականի մայիսի 30-ին) (այսուհետ նաև՝ **Ապրանքներ**):

2. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մայիսի 30-ի «Դիտանցում իրականացնելու մասին» թիվ 93-Ա հրամանի հիման վրա 2022 թվականի մայիսի 31-ին «Սաս-Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «Սաս» սուպերմարկետում՝ ք. Երևան, Իսահակյան 35 հասցեում, իրականացվել է դիտանցում, որի արդյունքում կազմվել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 93 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 93 արձանագրություն**):

Թիվ 93 արձանագրության համաձայն՝ «Սաս-Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «Սաս» սուպերմարկետում (հասցե՝ ք. Երևան, Իսահակյան 35) վաճառվում են Ընկերության կողմից արտադրված «eoos» մակնշմամբ 10 հատանոց տուփով հավկիթներ, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը (համաձայն մակնշման՝ դրանք արտադրված են 2022 թվականի մայիսի 27-ին), 6 հատանոց տուփով հավկիթներ, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը (համաձայն մակնշման՝ դրանք արտադրված են 2022 թվականի մայիսի 24-ին), «eoos» մակնշմամբ 15 հատանոց տուփով հավկիթներ, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը (համաձայն մակնշման՝ դրանք արտադրված են 2022 թվականի մայիսի 11-ին) և «eoos» մակնշմամբ «թարմ հավ ափսեով» (համաձայն մակնշման՝ դրանք արտադրված են 2022 թվականի մայիսի 31-ին):

3. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մայիսի 30-ի «Դիտանցում իրականացնելու մասին» թիվ 94-Ա հրամանի հիման վրա 2022 թվականի մայիսի 31-ին «Մաջիդ Ալ Ֆութաիմ Հայփերմարքեթս էյ-էմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «Քարֆուր» սուպերմարկետում՝ ք. Երևան, Արշակունյաց 34/3 հասցեում, իրականացվել է դիտանցում, որի արդյունքում կազմվել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 94 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 94 արձանագրություն**):

Թիվ 94 արձանագրության համաձայն՝ «Մաջիդ Ալ Ֆութաիմ Հայփերմարքեթս էյ-էմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «Քարֆուր» սուպերմարկետում (հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 34/3) վաճառվում են Ընկերության կողմից արտադրված «eoos» մակնշմամբ 10 հատանոց տուփով հավկիթներ, որոնց

կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը (համաձայն մակնշման՝ դրանք արտադրված են 2022 թվականի մայիսի 18-ին) և 6 հատանոց տուփով հավկիթներ, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը (համաձայն մակնշման՝ դրանք արտադրված են 2022 թվականի մայիսի 18-ին):

4. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մայիսի 30-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 99-Ա հրամանի հիման վրա www.supermarket.am ինտերնետային կայքում իրականացվել է արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 99 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 99 արձանագրություն**):

Թիվ 99 արձանագրության համաձայն՝ www.supermarket.am ինտերնետային կայքում իրացման նպատակով Ընկերության կողմից արտադրված ապրանքները ներկայացվում են հետևյալ ձևով. 10 հատանոց տուփով հավկիթները – Հավկիթ «Eco Foods» 10 հատ, 6 հատանոց տուփով հավկիթները – Հավկիթ «Eco Foods» 6 հատ, 15 հատանոց տուփով հավկիթները – Ձու «Eco Foods» 15 հատ, Թարմ հավ – Հավ թարմ «Էկո»:

5. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մայիսի 30-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 100-Ա հրամանի հիման վրա www.tsiran.am ինտերնետային կայքում իրականացվել է արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 100 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 100 արձանագրություն**):

Թիվ 100 արձանագրության համաձայն՝ www.tsiran.am ինտերնետային կայքում իրացման նպատակով Ընկերության կողմից արտադրված ապրանքները ներկայացվում են հետևյալ ձևով. ECO և eoo մակնշմամբ 10 հատանոց տուփով հավկիթները – Հավկիթ № 01 էկո 10 հատ, ECO և eoo մակնշմամբ 6 հատանոց տուփով հավկիթները – Հավկիթ № 01 էկո 6 հատ, ECO և eoo մակնշմամբ 15 հատանոց տուփով հավկիթները – Հավկիթ № 01 էկո 15 հատ:

6. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մայիսի 30-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 101-Ա հրամանի հիման վրա www.yerevan-city.am ինտերնետային կայքում իրականացվել է արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 101 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 101 արձանագրություն**):

Թիվ 101 արձանագրության համաձայն՝ www.yerevan-city.am ինտերնետային կայքում իրացման նպատակով Ընկերության կողմից արտադրված ապրանքները ներկայացվում են հետևյալ ձևով. «ECO» և «eoo» մակնշմամբ 15 հատանոց տուփով հավկիթները – Հավկիթ «Էկոս» #0-1 15 հտ, «ECO» և «eoo» մակնշմամբ 10 հատանոց տուփով հավկիթները – Հավկիթ «Էկոս» #0-1 10 հտ, «ECO» և «eoo» մակնշմամբ 6 հատանոց տուփով հավկիթները – Հավկիթ «Էկոս» #0-1 6 հտ, «ECO» և «eoo» մակնշմամբ պաղեցված հավի թևը – Հավի թարմ թևիկներ «Էկոս» 1 կգ, «eoos» մակնշմամբ հավի կրծքամիսը – Հավի թարմ կրծքամիս «Էկոս» 1 կգ, «ECO» և «eoo» մակնշմամբ պաղեցված հավի ճուտը - Թարմ ճուտ «Էկոս» 1 հտ, «ECO» և «eoo» մակնշմամբ պաղեցված հավի բուդը – Հավի բուդ «Էկոս» 1 կգ, «ECO» և «eoo» մակնշմամբ պաղեցված հավի դոշի ֆիլե – Հավի թարմ կրծքամսի ֆիլե «Էկոս» 1 կգ, «eoos» մակնշմամբ պաղեցված հավը – Թարմ հավ «Էկոս» ափսե կգ:

7. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մայիսի 30-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 102-Ա հրամանի հիման վրա www.sas.am ինտերնետային

կայքում իրականացվել է արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 102 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 102 արձանագրություն**):

Թիվ 102 արձանագրության համաձայն՝ www.sas.am ինտերնետային կայքում իրացման նպատակով Ընկերության կողմից արտադրված ապրանքները ներկայացվում են հետևյալ ձևով. 10 հատանոց տուփով հավկիթները – Հավկիթ «Էկո Ֆուդ» 10 հատ, 6 հատանոց տուփով հավկիթները – Հավկիթ «Էկո Ֆուդ» 6 հատ, 15 հատանոց տուփով հավկիթները – Հավկիթ «Էկո Ֆուդ» 15 հատ, Թարմ հավ – Հավ թարմ «Էկոս»:

8. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հունիսի 8-ի թիվ 2242 գրությամբ «Սաս-Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից (այսուհետ նաև՝ **«Սաս-Գրուպ» ընկերություն**) պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել www.sas.am ինտերնետային կայքում Ընկերության կողմից արտադրված ապրանքների նկատմամբ Հավկիթ «Էկո Ֆուդ» 10 հատ, Հավկիթ «Էկո Ֆուդ» 6 հատ, Հավկիթ «Էկո Ֆուդ» 15 հատ, Հավ թարմ «Էկոս» անվանումների և դրանցում «Էկո Ֆուդ» և «Էկոս» բառերի օգտագործման հիմքերը՝ կցելով դրանք հավաստող բոլոր փաստաթղթերի պատճենները:

«Սաս-Գրուպ» ընկերությունը 2022 թվականի հունիսի 15-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ Ընկերության կողմից մատակարարվել են «Ձու էքստրա 01 կարգ ԷԿՈՍ/6 տեղ/», «Ձու էքստրա 01 կարգ ԷԿՈՍ/15 տեղ/» և «Թարմ հավ էկոս» ապրանքները:

Այնուհետև տեղի է ունեցել անվանման փոփոխություն և նշված ապրանքները սկսել են մատակարարվել «Ձու էքստրա 01 կարգ ԷՍՈ/10 տեղ/», «Ձու էքստրա 01 կարգ ԷՍՈ/6 տեղ/», «Ձու էքստրա 01 կարգ ԷՍՈ/15 տեղ/» անվամբ:

Միևնույն ժամանակ «Սաս-Գրուպ» ընկերությունը հայտնել է, որ ապրանքների անվանումները նշելիս ղեկավարվում է մատակարարների կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում արտացոլված անվանումներով, ապրանքային պիտակների վրա նշված անվանումներով և համապատասխան հավաստագրերով:

Միաժամանակ «Սաս-Գրուպ» ընկերությունը նշել է, որ գրությամբ նշված անվանումները ներկայումս չեն օգտագործվում և կիրառվող անվանումները վերցվում են մատակարարի կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթղթում արտացոլված անվանումներից:

«Սաս-Գրուպ» ընկերությունը գրությանը կից ներկայացրել է ապրանքների մատակարարման հարկային հաշիվների, Եվրասիական տնտեսական միության համապատասխանության հայտարարագրի, լուսանկարի պատճենները և հավկիթների պիտակների երեք օրինակ: Ներկայացված ապրանքների մատակարարման հարկային հաշիվների համաձայն՝ Ընկերությունը 2022 թվականի մայիսի 24-ին «Սաս-Գրուպ» ընկերությանն է մատակարարել 36 տուփ «Ձու էքստրա 01 կարգ ԷԿՈՍ /10 տեղ/», 29 տուփ «Ձու էքստրա 01 կարգ ԷԿՈՍ/6 տեղ/» և 12 տուփ «Ձու էքստրա 01 կարգ ԷԿՈՍ/15 տեղ/» անվանումներով հավկիթներ (հարկային հաշիվ թիվ Ա4725904069), իսկ 2022 թվականի հունիսի 13-ին՝ 5 կիլոգրամ «Թարմ բուդ ԷԿՈՍ», 5 կիլոգրամ «Թարմ ֆիլե ԷԿՈՍ», 9.3 կիլոգրամ «Թարմ հավ/ԷԿՈՍ պաղեցված» և 5 կիլոգրամ «Թարմ թև ԷԿՈՍ» անվանումներով ապրանքներ (հարկային հաշիվ թիվ Ա3632972966):

9. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հունիսի 8-ի թիվ 2243 գրությամբ «Օնլայն Սուպերմարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից (այսուհետ նաև՝ **«Օնլայն Սուպերմարկետ» ընկերություն**) պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել «www.supermarket.am» ինտերնետային կայքում Ընկերության կողմից արտադրված ապրանքների նկատմամբ «Հավկիթ «Eco Foods» 6 հատ», «Հավկիթ «Eco

Foods» 10 հատ», «Ձու «Eco Foods» 15 հատ» և «Հավ թարմ «էկո»» անվանումների և դրանցում «Eco Foods» և «էկո» բառերի օգտագործման հիմքերը՝ կցելով դրանք հավաստող բոլոր փաստաթղթերի պատճենները:

«Օնլայն Սուպերմարկետ» ընկերությունը 2022 թվականի հունիսի 29-ին Հանձնաժողով է ներկայացրել Եվրասիական տնտեսական միության համապատասխանության հայտարարագրի պատճենը որպես Ընկերության կողմից արտադրված ապրանքների նկատմամբ «Հավկիթ «Eco Foods» 6 հատ», «Հավկիթ «Eco Foods» 10 հատ», «Ձու «Eco Foods» 15 հատ» և «Հավ թարմ «էկո»» անվանումների և դրանցում «Eco Foods» և «էկո» բառերի օգտագործման հիմք:

10. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հունիսի 8-ի թիվ 2244 գրությամբ «Ծիրան Մարկետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից (այսուհետ նաև՝ **«Ծիրան Մարկետ» ընկերություն**) պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել «www.tsiran.am» ինտերնետային կայքում Ընկերության կողմից արտադրված ապրանքների նկատմամբ «Հավկիթ № 01 էկո 6 հատ», «Հավկիթ № 01 էկո 10 հատ» և «Հավկիթ № 01 էկո 15 հատ» անվանումների և դրանցում «էկո» բառի օգտագործման հիմքերը՝ կցելով դրանք հավաստող բոլոր փաստաթղթերի պատճենները:

«Ծիրան Մարկետ» ընկերությունը 2022 թվականի հունիսի 17-ին Հանձնաժողով է ներկայացրել Ընկերության կողմից դուրս գրված ապրանքների մատակարարման հարկային հաշիվների, Եվրասիական տնտեսական միության համապատասխանության հայտարարագրի պատճենները որպես Ընկերության կողմից արտադրված ապրանքների նկատմամբ «Հավկիթ № 01 էկո 6 հատ», «Հավկիթ № 01 էկո 10 հատ» և «Հավկիթ № 01 էկո 15 հատ» անվանումների և դրանցում «էկո» բառի օգտագործման հիմքեր:

11. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հունիսի 8-ի թիվ 2245 գրությամբ «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից (այսուհետ նաև՝ **«Սիթի» ընկերություն**) պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել «www.yerevan-city.am» ինտերնետային կայքում, ինչպես նաև «Երևան Սիթի» սուպերմարկետում գնապիտակների վրա Ընկերության կողմից արտադրված ապրանքների նկատմամբ «Հավկիթ «էկոս» #0-1 6 հտ», «Հավկիթ «էկոս» #0-1 10 հտ», «Հավկիթ «էկոս» #0-1 15 հտ», «Հավի թարմ թևիկներ «էկոս» 1 կգ», «Հավի թարմ կրծքամիս «էկոս» 1 կգ», «Թարմ ճուտ «էկոս» 1 հտ», «Հավի բուդ «էկոս» 1 կգ», «Հավի թարմ կրծքամսի ֆիլե «էկոս» 1 կգ», «Թարմ հավ «էկոս» ափսե կգ», «Հավի բուդ «էկո» 1 կգ», «Հավի թարմ թևիկներ «էկո» 1 կգ», «Հավի թարմ կրծքամիս «էկո» 1 կգ» և «Հավկիթ «էկո» #0-1 15 հտ» անվանումների և դրանցում «էկոս» ու «էկո» բառերի օգտագործման հիմքերը՝ կցելով դրանք հավաստող բոլոր փաստաթղթերի պատճենները:

«Սիթի» ընկերությունը 2022 թվականի հունիսի 16-ի Եվրասիական տնտեսական միության համապատասխանության հայտարարագրերի պատճենները որպես Ընկերության կողմից արտադրված ապրանքների նկատմամբ «Հավկիթ «էկոս» #0-1 6 հտ», «Հավկիթ «էկոս» #0-1 10 հտ», «Հավկիթ «էկոս» #0-1 15 հտ», «Հավի թարմ թևիկներ «էկոս» 1 կգ», «Հավի թարմ կրծքամիս «էկոս» 1 կգ», «Թարմ ճուտ «էկոս» 1 հտ», «Հավի բուդ «էկոս» 1 կգ», «Հավի թարմ կրծքամսի ֆիլե «էկոս» 1 կգ», «Թարմ հավ «էկոս» ափսե կգ», «Հավի բուդ «էկո» 1 կգ», «Հավի թարմ թևիկներ «էկո» 1 կգ», «Հավի թարմ կրծքամիս

«Էկո» 1 կգ» և «Հավկիթ «Էկո» #0-1 15 հտ» անվանումների և դրանցում «էկոս» ու «էկո» բառերի օգտագործման հիմքեր:

12. Ընկերությունը, ի պատասխան Հանձնաժողովի նախագահի՝ 2021 թվականի հունիսի 11-ի թիվ ԳԳ-1471 գրության, ի թիվս այլնի, Հանձնաժողովին հայտնել է, որ «eoos» և «Էկոս» մակնշմամբ ապրանքներ սկսել է իրացնել :

13. Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի հուլիսի 20-ի թիվ 3706 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ-ին՝ խնդրելով տրամադրել 2021 թվականին Ընկերության կողմից ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՊԵԿ-ը 2022 թվականի հուլիսի 21-ին Հանձնաժողով է ներկայացրել պահանջված տեղեկատվությունը, որի համաձայն՝

:

14. ՊԵԿ տեղեկատվական տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերության 2021 թվականի տարեկան հասույթի չափը կազմել է

:

Նույն տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից մատակարարվել է «ԷԿՈՍ» մակնշմամբ

:

***6. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.***

1. Ընկերության կողմից իրացվել է 2022 թվականի ապրիլի 30-ից մինչև 2022 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում արտադրված «eoos» մակնշմամբ 10 հատանոց տուփով հավկիթներ, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը, «eoos» մակնշմամբ 6 հատանոց տուփով հավկիթներ, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը, «eoos» մակնշմամբ 15 հատանոց տուփով հավկիթներ, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը, «eoos» մակնշմամբ «թարմ հավ ափսեով», «eoos» մակնշմամբ «հավի ֆիլե», «eoos» մակնշմամբ «հավի դոշ», «eoos» մակնշմամբ «հավի թև» և «eoos» մակնշմամբ «հավի բուդ» ապրանքներ: Ապրանքների տուփերի կամ փաթեթվածքների

վրա մակնշված «eoos» գրառման մեջ «oo» տառերը մակնշված են «co» տառերին նմանվող հատուկ ձևավորմամբ:

2. Ապրանքները չունեն օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստագրեր (սերտիֆիկատներ):

3. Ընկերությունը հայտնել է, որ Ապրանքները սկսել է իրացնել

:

4. Ընկերությունը Հանձնաժողով ներկայացված արագացված վարույթ կիրառելու վերաբերյալ միջնորդությամբ հայտնել է, որ ընդունում է իրավախախտման փաստը և վերացրել է դրանց հետևանքները:

5. Հանձնաժողովը թիվ 258-Ա որոշմամբ բավարարել է Միջնորդությունը և կիրառել է արագացված վարույթ:

6. Ընկերության 2021 թվականի տարեկան հասույթի չափը կազմել է

, իսկ 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից իրացվել է ՀՀ դրամի «ԷԿՈՍ» մակնշմամբ ապրանքներ:

7. Հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 30-ի ««Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 212-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 212-Ա որոշում**) Ընկերության վարքագիծը, այն է՝ Ընկերության կողմից 10 հատանոց տուփով «NATURE FOOD» անվանումով և «ECO» նշումով հավի ձու, 10 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու, 6 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու, «eco» մակնշումով հավի դոշի ֆիլե, «eco» մակնշմամբ «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև» և «պաղեցված հավի դոշ» ապրանքների իրացումն այն դեպքում, երբ այդ ապրանքները չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանք, որակվել է որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն և Ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ նախազգուշացում:

8. Հանձնաժողովի թիվ 217-Ա որոշմամբ Ընկերության վարքագիծը, այն է՝ Ընկերության կողմից «eoos» և «ԷԿՈՍ» մակնշմամբ 6 հատանոց տուփով հավի ձու, ինչպես նաև «eoos» մակնշմամբ «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև», «պաղեցված հավի դոշ» և «պաղեցված հավի դոշի ֆիլե» ապրանքների իրացումն այն դեպքում, երբ տվյալ ապրանքները չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանքներ, որակել որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն և Ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ տուգանք՝ 4 817 823 (չորս միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր քսաներեք) ՀՀ դրամի չափով:

9. Թիվ 217-Ա որոշումն ուժի մեջ է մտել 2022 թվականի ապրիլի 30-ին և Ընկերության կողմից այն չի բողոքարկվել:

***7. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.***

***1) Ընկերության կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.***

Օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում վարույթով պատասխանողը իրեն վերագրվող իրավախախտման հետևանքները վերացրած լինելու և իրավախախտման փաստն ընդունելու, իսկ սույն օրենքի 73-րդ հոդվածով նախատեսված դեպքում միայն իրավախախտման փաստն ընդունելու դեպքում կարող է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել Հանձնաժողով:

Օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացվելու դեպքում վարույթով պատասխանողը չի կարող հետագայում հերքել իր կողմից իրավախախտում կատարելու փաստը:

Օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արագացված վարույթ կիրառելու մասին որոշում կայացվելու դեպքում գործի՝ ըստ էության քննությանն ուղղված գործողություններ չեն իրականացվում, և գնահատվում են միայն պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարույթը հարուցվել է Ընկերության կողմից արտադրված «eoos» մակնշմամբ 10 հատանոց տուփով հավկիթների, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը, «eoos» մակնշմամբ 6 հատանոց տուփով հավկիթների, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը, «eoos» մակնշմամբ 15 հատանոց տուփով հավկիթների, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը, «eoos» մակնշմամբ «թարմ հավ ափսեով», «eoos» մակնշմամբ «հավի ֆիլե», «eoos» մակնշմամբ «հավի դոշ», «eoos» մակնշմամբ «հավի թև» և «eoos» մակնշմամբ «հավի բուդ» ապրանքների իրացման միջոցով հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Ընկերությունն ընդունել է Վարույթով իրեն վերագրվող իրավախախտման փաստը՝ հայտնելով, որ վերացրել է խախտումները, միջնորդել է կիրառել արագացված վարույթ և Հանձնաժողովը կայացրել է արագացված վարույթ կիրառելու մասին որոշում:

Հանձնաժողովի թիվ 217-Ա որոշմամբ Ընկերության վարքագիծը, այն է՝ Ընկերության կողմից «eoos» և «ԷԿՈՍ» մակնշմամբ 6 հատանոց տուփով հավի ձու, ինչպես նաև «eoos» մակնշմամբ «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև», «պաղեցված հավի դոշ» և «պաղեցված հավի դոշի ֆիլե» ապրանքների իրացումն այն դեպքում, երբ տվյալ ապրանքները չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանքներ, որակել որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն և Ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ տուգանք՝ 4 817 823 (չորս միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր քսաներեք) ՀՀ դրամի չափով:

Թիվ 217-Ա որոշումն ուժի մեջ է մտել 2022 թվականի ապրիլի 30-ին և Ընկերության կողմից այն չի բողոքարկվել: Հետևաբար նաև այդ փաստի ուժով Ընկերությունը տեղյակ է եղել, որ «eoos» և «ԷԿՈՍ» մակնշմամբ ապրանքների իրացումը հանգեցնում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության, մինչդեռ Ընկերությունը 2022 թվականի ապրիլի 30-ից մինչև 2022 թվականի մայիսի 31-ն ընկած

ժամանակահատվածում շարունակել է արտադրել և իրացնել «eoos» մակնշմամբ 10 հատանոց, 6 հատանոց 15 հատանոց տուփերով հավկիթներ, որոնց կճեպների վրա մակնշված է «ԷԿՈս» բառը, ինչպես նաև «eoos» մակնշմամբ «թարմ հավ ափսեով», «eoos» մակնշմամբ «հավի ֆիլե», «eoos» մակնշմամբ «հավի դոշ», «eoos» մակնշմամբ «հավի թև» և «eoos» մակնշմամբ «հավի բուդ» ապրանքներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերության կողմից 2022 թվականի ապրիլի 30-ից մինչև 2022 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում արտադրված «eoos» մակնշմամբ 10 հատանոց տուփով, 6 հատանոց տուփով, 15 հատանոց տուփով հավկիթների և դրանց կճեպների վրա մակնշված «ԷԿՈս» բառի մակնշմամբ, ինչպես նաև «eoos» մակնշմամբ «թարմ հավ ափսեով», «հավի ֆիլե», «հավի դոշ», «հավի թև» և «հավի բուդ» ապրանքներն իրացնելն այն դեպքում, երբ դրանք չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանքներ, պարունակում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ, որի կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված է իրավական հետևանք՝ պատասխանատվության միջոցի կիրառում:

***<u>2) Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.</u>***

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Օրենքի 88-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ արագացված վարույթի կիրառման արդյունքում պատասխանատվության միջոց կիրառելիս պատասխանատվության միջոցը չի կարող գերազանցել տվյալ իրավախախտման համար նախատեսված ամենախիստ պատասխանատվության միջոցի մեկ երկրորդը:

Մեթոդաբանության 12-րդ կետի համաձայն՝ տուգանքը հաշվարկվում է հետևյալ փուլերով.

1) որոշվում է տուգանքի բազային գումարը.

2) գնահատվում են վարույթի ընթացքում հաստատված ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, և հիմքերի առկայության դեպքում բազային գումարը ենթարկվում է համապատասխան փոփոխությունների.

3) Մեթոդաբանությամբ նախատեսված դեպքերում համապատասխանեցվում է պատասխանատվության միջոցը:

Մեթոդաբանության 13-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը տուգանքը հաշվարկում է Տ = Բ + Բ x (Ծ - Մ) բանաձևով, որտեղ՝ Տ-ն տուգանքի չափն է, Բ-ն տուգանքի բազային գումարն է, Ծ-ն բոլոր ծանրացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն է, Մ-ն բոլոր մեղմացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն է:

***<u>Բազային գումարի հաշվարկը.</u>***

Մեթոդաբանության 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունը ըստ բնույթի մրցակցային իրավախախտում է:

Մեթոդաբանության 14-րդ կետի համաձայն՝ մրցակցային իրավախախտումների դեպքում տուգանքի բազային գումարը որոշվում է ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարի, իրավախախտման համապատասխան ծանրության խմբի համար սահմանված տոկոսի և իրավախախտման տևողության արտադրյալի հաշվարկման միջոցով՝ Բ = Հ x Խ x Ժ բանաձևով, որտեղ՝ Բ-ն տուգանքի բազային գումարն է մրցակցային իրավախախտումների դեպքում, Հ-ն ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարն է, Խ-ն իրավախախտման համապատասխան ծանրության խումբն է, Ժ-ն իրավախախտման տևողությունն է:

*Ապրանքի իրացումից ստացված հասույթ.*

Ապրանքի իրացումից ստացված հասույթի չափը որոշելիս հիմք է ընդունվում Մեթոդաբանության 17-րդ կետը: Տվյալ պարագայում մինչև Վարույթի հարուցումը Ընկերության կողմից իրավախախտումը դադարեցված լինելու վերաբերյալ որևէ ապացույց առկա չէ, իսկ Ընկերության՝ Վարույթը հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարվա՝ 2021 թվականի Ապրանքների և դրանց փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացումից ստացված հասույթի չափը կազմել է ՀՀ դրամ:

*Իրավախախտման ծանրության խումբը.*

Հիմք ընդունելով Մեթոդաբանության 20-րդ կետի 3-րդ ենթակետը՝ սույն գործով ծանրության խումբը պետք է հաշվարկել 2.5 տոկոս դրույքաչափով:

*Իրավախախտման տևողությունը.*

Հիմք ընդունելով Մեթոդաբանության 23-րդ կետը՝ իրավախախտման տևողության գործակիցը 1 է:

Վերոնշյալից բխում է, որ տուգանքի բազային գումարը կազմում է 11 228 593.2 ՀՀ դրամ՝ ըստ հետևյալ հաշվարկի.

Բ= Հ x Խ x Ժ= x 2.5% x = 11 228 593.2 ՀՀ դրամ:

*Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.*

Մեթոդաբանության 31-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը դիտարկում է ծանրացնող և մեղմացնող հանգամանքները և վարչական ակտում արտացոլում միայն այն հանգամանքները, որոնք հաստատվել են համապատասխան վարույթի ընթացքում:

Մեթոդաբանության 32-րդ կետի համաձայն՝ մեղմացնող հանգամանքի առկայության ապացուցման բեռը կրում է վարույթով պատասխանողը:

Մեթոդաբանության 27-32-րդ կետերով սահմանված են պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև սահմանված են բազային գումարից ծանրացնող և մեղմացնող հանգամանքների հաշվարկման դրույքաչափերը:

Սույն իրավախախտման մասով որպես մեղմացնող հանգամանքներ լինելու վերաբերյալ որևէ ապացույց կամ հիմք Ընկերությունը չի ներկայացրել և Հանձնաժողովի կողմից չի հայտնաբերվել:

Մեթոդաբանության 27-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք է համարվում տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, որն առկա է, եթե.

ա. տնտեսավարող սուբյեկտը ենթարկվել է պատասխանատվության Օրենքի 93-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նույն խախտման համար.

բ. նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի:

Տվյալ դեպքում Հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 30-ի ««Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 212-Ա որոշմամբ Ընկերության վարքագիծը, այն է՝ Ընկերության կողմից 10 հատանոց տուփով «NATURE FOOD» անվանումով և «ECO» նշումով հավի ձու, 10 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու, 6 հատանոց տուփով և «eco foods», «բարձր որակի հավկիթ eco» նշումներով հավի ձու, «eco» մակնշումով հավի դոշի ֆիլե, «eco» մակնշմամբ «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև» և «պաղեցված հավի դոշ» ապրանքների իրացումն այն դեպքում, երբ այդ ապրանքները չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանք, որակվել է որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն և Ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ նախազգուշացում:

Բացի այդ, Հանձնաժողովի թիվ 217-Ա որոշմամբ Ընկերության վարքագիծը, այն է՝ Ընկերության կողմից «eoos» և «ԷԿՈՍ» մակնշմամբ 6 հատանոց տուփով հավի ձու, ինչպես նաև «eoos» մակնշմամբ «պաղեցված հավ», «պաղեցված հավի բուդ», «պաղեցված հավի թև», «պաղեցված հավի դոշ» և «պաղեցված հավի դոշի ֆիլե» ապրանքների իրացումն այն դեպքում, երբ տվյալ ապրանքները չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանքներ, որակել որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն և Ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ տուգանք՝ 4 817 823 (չորս միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր քսաներեք) ՀՀ դրամի չափով:

Այսպիսով, ծանրացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը կազմում է 10%, իսկ մեղմացնող հանգամանքներինը՝ 0%:

***<u>Տուգանքի հաշվարկը.</u>***

Վերոշարադրյալից հետևում է, որ տուգանքի չափը կազմում է 12 351 452.5 ՀՀ դրամ՝ համաձայն հետևյալ հաշվարկի.

Տ= Բ + Բ x (Ծ - Մ) = 11 228 593.2 + 11 228 593.2 x (10%-0%) = 12 351 452.5 ՀՀ դրամ:

Մեթոդաբանության 37-րդ կետի համաձայն՝ արագացված վարույթի կիրառման արդյունքում Հանձնաժողովը նշանակում է Մեթոդաբանությամբ հաշվարկված տուգանքի գումարի մեկ երկրորդը:

Միաժամանակ Հանձնաժողովը, անդրադառնալով Ընկերությանը նախազգուշացում տալու փաստարկին, արձանագրում է հետևյալը.

1. Ընկերության կողմից կատարված իրավախախտման համեմատ տուգանքի կիրառման անհամաչափ լինելու վերաբերյալ որևէ հիմնավորող ապացույց կամ փաստարկ չի ներկայացվել.

2. Մեթոդաբանությամբ սահմանված չէ ուղղակի կարգավորում արգացված վարույթ կիրառելու դեպքում տնտեսավարող սուբյեկտին նախազգուշացում տալու վերաբերյալ.

3. Ընկերության վատ ֆինանսական վիճակը հիմք է նախազգուշացում տալու միայն այն դեպքում, երբ կհանգեցնի Ընկերության հաշվեկշռային անվճարունակության: Ընդ որում, Ընկերությունը նման ապացույցներ չի ներկայացրել:

Այսպիսով, հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները և հիմք ընդունելով թիվ 395-Ն որոշումը, Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերության կողմից «eoos» և «ԷԿՈս» գրառումների մակնշմամբ Ապրանքներն իրացնելու միջոցով հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության համար Ընկերությանն անհրաժեշտ է նշանակել տուգանք 6 175 712 (վեց միլիոն հարյուր յոթանասունհինգ հազար յոթ հարյուր տասներկու) ՀՀ դրամի չափով:

***3) <u>Ընկերությանը հանձնարարություն տալու հարցի կապակցությամբ</u>.***

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն:

Տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրել է, որ առանց օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության հավաստագրերի (սերտիֆիկատների) Ընկերության կողմից 2022 թվականի ապրիլի 30-ից մինչև 2022 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում արտադրված 10 հատանոց, 6 հատանոց 15 հատանոց տուփերով հավկիթների, ինչպես նաև «թարմ հավ ափսեով», «հավի ֆիլե», «հավի դոշ», «հավի թև» և «հավի բուդ» ապրանքների տուփերի կամ փաթեթվածքների վրա «eoos», իսկ հավկիթների կճեպների վրա «ԷԿՈս» գրառումների մակնշմամբ տվյալ ապրանքների իրացման միջոցով դրսևորել է հասարակության մոլորեցման գործողություն, իսկ Վարույթի շրջանակներում Ընկերությունն ընդունել է Վարույթով իրեն վերագրվող իրավախախտման փաստը՝ հայտնելով, որ վերացրել է խախտումները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները

համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:

Վկայակոչված դրույթից հետևում է, որ իրավախախտման հետևանքները վերացված լինելու վերաբերյալ վարույթով պատասխանողի կողմից ներկայացված տվյալները և տեղեկությունները գործում հակառակի վերաբերյալ ապացույցների բացակայության դեպքում ընդունվում են որպես հավաստի: Ընդ որում, Հանձնաժողով կեղծ տվյալներ և տեղեկություններ ներկայացնելու համար վարույթով պատասխանողը կրում է պատասխանատվություն:

Նման պայմաններում Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերությանը հանձնարարություն տալու անհրաժեշտությունը բացակայում է:

***8. Եզրափակիչ մաս.***

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 88-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2022 թվականի ապրիլի 30-ից մինչև 2022 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում արտադրված «eoos» մակնշմամբ 10 հատանոց տուփով, 6 հատանոց տուփով, 15 հատանոց տուփով հավկիթների և դրանց կճեպների վրա մակնշված «ԷԿՈս» բառի մակնշմամբ, ինչպես նաև «eoos» մակնշմամբ «թարմ հավ ափսեով», «հավի ֆիլե», «հավի դոշ», «հավի թև» և «հավի բուդ» ապրանքներն իրացնելն այն դեպքում, երբ դրանք չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանքներ, որակել որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն (այսուհետ՝ **Օրենքի խախտում):**
2. Օրենքի խախտման համար «Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ նշանակել տուգանք 6 175 712 (վեց միլիոն հարյուր յոթանասունհինգ հազար յոթ հարյուր տասներկու) ՀՀ դրամի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Արաքս Թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:
4. Սույն որոշման 2-րդ կետը դրանով նշանակված տուգանքը մինչև սույն որոշման անբողոքարկելի դառնալը չվճարվելու դեպքում ենթակա են հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

**ՆԱԽԱԳԱՀԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

2022 թ. օգոստոսի 3
Երևան